

առու սաղարթներով հովանաւորուած հրապարակը, իւր քաղցրա-
համ ջրի ազրի բոլ հիացմունք է պատճառում անցորդին:

Բնակիչները բոլորն էլ թուրքեր են, 229 տուն, 829 ար. 681
իգ. ի միասին՝ 1510 հոգի:

ԹՂԱՑԻ ԿԱՄ ԶԱՆԱՄՐԻ ՁՈՐ

Վանանդաձորից դէպի արևմուտք, գարձեալ հիւսիսից հա-
րաւ ձգւում է մի ուրիշ ձոր, որ անդ տեղ տեկի ընդարձակ է,
քան վանանդաձորը: Այստեղ, ձորի երկու կողմում զանուած լեռ-
ների մէջ նշանաւոր են Ֆին գաշը, Դաշըաշին, Դուրթ-թափան,
բոլորն էլ մերկ: Չորի միջով հօսում է մի գետակ, որ սկիզբն է առնում
Եազլու-գարս լերան մէջ տեղից և ստանում է այն զիւղի անունը:
որի մօսով անցնում է:

Զորի կիման հիւսիսում համեմատաբար ցուրտ, իսկ հարա-
ւում աւելի տաք է: Զորը պատած է զինաւորապէս թթենիներով:
կան նաև խաղողի այգիներ:


Զորի ամենավերին մասում, բլուրների գոգաւորութեան մէջ
գտնուում է Ռասիս կամ Ռուռուսիս զիւղը, որի հանապարհը
չափազանց վատ է: Դիւղը ունի մի եկեղեցի, այժմ էլ հայաբնակ
է, բնակիչներն ընդամենը 31 տուն են, 377 հոգի, որից 207 ար-
և 170 իգական: Սրանք գտնուերով Նարարապին սահմանակից՝ թէ
սովորութիւններով և թէ բարբառով աւելի նրանց են նման քան
զակերին:

Ռեմիսից 3—4 վերստ ներքև, ձորում, տարածւում է Ստորի
կամ Ռուսուսիի թթաբնակ գիւղը, 90 տուն բնակիչներով, 527
ար. 215 իգ. իմիասին 742 հոգի:

Ուստուսից հազիւ մի վերստ ներքև, գետի երկու կողմում
փուլում է Ծղնու կամ Հանանաւը զիւղը, որի հիւսիսային ծայրում
գտնուում է ս. Աստուածածնի վանքը, հարաւային կողմում, ջրի
ձափի ափին, Տամբրի թաղում բարձրանում ս. Սարգսի եկեղեցին:
Իսկ սրանից վերև ցցուած է Հարս ու փեսի քարը: Փողոցներից
շատերը թէն ծառազարդ, բայց անկանոն են ու նեղ. տներից շա-
տերը պարտէզներով պատած են, մի քանիսը երկյարկանի և եւրո-

1) Պատմում են, թէ մի տղայ ու աղջիկ միմեանց վրայ սի-
րահարուելով փախել են, որպէս զի իրենց միութեան հակառակող
ծնողների բռնութիւնից ազատուին. սակայն երբ որանք իմացել
են նրանց փախուստը և անիժել, իսկոյն քար են կտրել ու մի-
մանց գրկախանած մնացել իրը անիօս բողոք իրանց ծնողնե-
րի բռնութեան դէմ:

պական ճաշակով կահաւորուած։ Մարդ հիանում է երբ ապառաժոս, մերկ բլրակների ու ամուլ լըջակայքի վրայից հայեցքը ձգում է զիւղի վրայ, ուր ամէն մի բոյսը, ամէն մի քարը, քարաժայունը միջով անցկացրած լրանցքներն ու անանցանելի քարափների մէջ շինած Մարդուանների եւրոպական ձևի մետաք-



ԺՂՆԱԲԻ Ա. ԱՍՈԽԱՆՅԱՆԻ ՎԱՐԴԱՐ

սեայ զործարանը վկայում են դօկի անխոնջ աշխատասիրութեան և առկունութեան մասին։

Ս. Աստուածածնի եկեղեցին սրբատաշ քարերով շինուած մի հոյակապ շնչք է։ Չորս իսկական և ութ կեզծ սիւների վրայ բոլորում են ոռմանական կամարներ՝ կրելով ութ պատուհաններով զարդարուած զմբէթը։ Ուրիշ իննը պատուհաններ (1 արշ. երկ. 1/2

արշ. լայնութեան) էլ բաւականաշափ լոյս են սփռում: Միայն այս եկեղեցու մէջ ևս միբառութեան աւագանի կողքին և հանդէպը, պատերի մէջ կան պահարանի բացուածքներ՝ պարսկական ճարտարապետութեան մի տգեղ ներմուծութիւն:

Խորանների միջից գագանի անցքեր ձգւում են պատերի մէջ և ատանիբի տակ, ուր բաւականաշափ տեղ կայ թէ իրեր պահելու և թէ, վանդաւոր ժամանակներում, թաք կենալու:

Եկեղեցին ունի երկու գուռն, երկումն էլ շատ գեղեցիկ քանդակներով եղբափակուած: Հարաւային դռան վերև քանդակուած է Պողոս և Պետրոս առաքեաների պատկերները, իսկ առաջը բարձրանում է եռայարկ, գմբէթաւոր մի զանգակատուն, նախ չորս և ապա ութական սիմերի վրայ հաստատուած: Այս զանգակատուն հարաւային ճակատին քանդակուած են աջ կողմում՝ Աստուածածինը, ձախում՝ խաչուած Յիսուսը, երկումն էլ մարգաշափ մնջութեան:

Հիւսիսային դռան վերև ես քանդակուած է Աստուածածինը՝ Յիսուս որդին գրկում, որի ներքն արձանագրուած է.

Մնաթ, Յղնու եղեալ իշխանք շինեցինք տունս Այ սրածածին զվինք ժԲ. լիտը սսկի էլ մեր մըն վախուա արինք տառնին մէկն որ պայծառ լինի որ է մէկ հատն արեվելեան կողմն կիզն յարեվմտեան կողմն սարն, հարվային կողմն Մսկն դաշտու քարն, հիւսիսն կողմն համամն.

Սոյն դռան ձախ կողմը կայ հետևեալ արձանագրութիւնը.

Թիշատակ է Մրցանանց Խաչատուրին եւ իր կողակից Մարգարտին. թվ. ՌԾ 20.

Եկեղեցու պատերի վրայ, արտաքուստ, զրեթէ մէջ տեղից ձգւում է մի շղթայածն քանդակ, որին միանում են պատուհանների և գաների շուրջը պատող նոյնանման քանդակների Նաև կրտուրի չորս անկիւններից բաշ են արուած մի բարէ օգակներից շինուած շղթաներ, որ օրորւում են քամու ազգեցւթեամբ:

Եկեղեցու մէջ կան մի քանի գերեզմանաքարեր որոնց վրայ ամրացրած մարմարնեայ տախտակների վրայ գրուած է.

Տապանս այս է խօնայ Պաղտասարին զոր բազում օգնականութիւն արար ի վերայ Եկեղեցւոյս շինութեան ի թվին ՌԾ 21.

Ի Յղնու պարուն Պարսադան պէկի քվերորդի Գուրգէն պէկի գերեզմանն է ի թվին ՌԾ 21, ով կարդայ ողորմի ասի:

Տապանս այս է խօնայ Անդրէասին ի թվին ՌԾ 21.

Տապանս այս է յօրինեալ իշատակի մնունի Անանիայի որդի խօնայ Սիմոնին թվ. ՌԾ 20.

Տապանս այս է յօրինեալ ի յիշատակի Ռհանիսի որդի
խոնայ Յակոբին թվ. ՌԾՇՀ.

Ս. Աստուածածնին եկեղեցին պարսպապատ է և պարսպի մէջ
ունի մի և երկյարկանի շինութիւններ, ուր երբեմն գետեղուած էր
ծխական զպրոցը,

Գիւղի հողը այս եկեղեցուն է պատկանում, ուստի և գիւ-
ղացիները տարեկան 100 բուրլի են վճարում եկեղեցուն իրը կա-
պալագրամ,

Ս. Սարգսի եկեղեցին փայտածածք և փայտի սիւների վրայ
յինած մի հասարակ շնչի է, որի սեղանի վրայ մի շատ գեղեցիկ
խաչ կայ հետեւեալ արձանագրութեամբ.

Սը հաշը յիշատակ Ծսայեայ կրանաւորի թվ ՓՂ.

Սրա ձափ կողմում ևս մի խաչ կայ՝ այս արձանագրութեամբ.

Սը խաչը յիշատակ Զնան մելից էնէքէկ Աժատուրայ,
Սալթանայ Զատֆարշնայ...

Աչ կողմում ևս մի ուրիշ խաչի վրայ.

Սը խաչը յիշատակ Անդոնայ Ռւզանայ եւ Էլլնախայ.
ՊՀԴ.

Եկեղեցին ունի երկու գուռն, որոնցից արևմտեանի աջ կող-
մին գրուած է.

Հայրապետութիւն Հայոց Տր Մելիքսէթ գեղիս քահա-
նայութիւն պարոն տէր Աւետոսին տր Ղուկաս եպիսկոպոս
տեղին ախսախսալութ խոնայ Անծե Հայրապետ, Աւազ, ուժիտ
Աղամիր Դաւլաթ, Խորայէլ, Միքայէլ Միքայէլ յետ գրլ դրմն խատը
թվ Ռնկ.

Սրա վերև մի գեղեցիկ խաչի տակ.

Սը խաչը յիշատակ... Ռևծ.

Դռան ձափ կողմում. Թագաւորութիւն Շահ-Աբաս, կա-
թողիկոսութիւն Տէր Մելիքսեսէկ եպիսկոպոսութիւն տէր
Օշտին գեղիս եպիսկոպոս Ղուկասն թվ ՌՆ.

Սրա վերև ևս կայ մի ուրիշ խաչ, թթն թուականով:

Հարաւային դռան աջ կողմի խաչքարի տակ.

Խաչը յիշատակ Սարգսին երիցու եւ կողակցին Նդիսա-
բէթայ դստերն Ռւտիրանէ. թվ ՓՀԴ.

Ձափ կողմի խաչքարի վրայ. Խաչը յիշատակ խալիւ սար-
կօագիս Մարգարին թվ ԶԼԴ.

Սոյն դռան վերև.

Գիւղիս սը Սարգիս եկեղեցիս նորոգուեցաւ Յղնայ ժո-
ղովրդեան ծախիւթ վերակացութեամբ Սաղաթէլ Սաղաթէ-
լխանցի 1890 ամի.

Պարզ է, որ միայն այս արձանագրութիւնն է վերաբերում ևկեղեցւն, միւսները զանազան զերեզմանների վրայից վերցրած խաչքարեր են, ինչպէս և ևկեղեցու հարաւային պատի մէջ ամրացրած երկու խաչքարը, որոնցից մինի վրայ կարդացւում է.

Խաչ յիշատակ է Մամիկոնիկայ, Հռունանայ, Յոնան-Նիսայ, Խիզիրշահնայ որդի Անխիղիրայ եւ Խաթունայ. Թվ ջի՞ջ.

Դիւզից փոքր ինչ բարձր նկատելի են մի հին ամրոցի հետքեր:

Բնակիներն ընդգամինը 86 տում են, 543 ար. 437 իդ. ի միասին՝ 980 հոգի, որից միայն 3 տունը՝ 13 ար. 4 իդ. թուրքեր են, մասցած հայեր:

Ցղնայից մօս հինգ վերստ հնուու գէպի հարաւ, մի հարթութեան վրայ զանուում է Ս. Ստեփաննոսի ուխտատեղին, որ մօտակայ աւերակ զիւզատեղու անունով Մշիզկունց վանք էլ է կոչւում. Սա թովմաս եպիսկոպոսի յիշատակած Մցզունի Ս. Ստեփանոսի վանքն է, որ եղել է նաև Արքահամ կաթողիկոսը Հին-Ջուղա զնալիս:

Այս վանքն այժմ վերաշինուած է. անցեալից մնում են միայն կիսակործան պարիսպն. Այժմեան վանքը մի հասարակ, փայտածածք, փոքրիկ շինք է:

Ցղնայից ներքեւ գտնուում են Դիւզլուն և Դիւզլունղիզա գիւղերը, երկուուն էլ թբքաբնակ, առաջնուում կան 49 տուն ընակիչ, 146 ար. 101 իդ. ի միասին՝ 247 հոգի, միւսում 9 տուն, 24 ար. 11 իդ. ի միասին՝ 35 հոգի:

ԲՈՏԱՉՈՐ—ԳԻԱՆՍՅՈՐ

Ցղնայի ձորից գէպի արևմուտք, գարձեալ հիւսիսից հարաւ ձգւում է մի ուրիշ ձոր, որ թէ երկարութեամբ և թէ լայնութեամբ ամենամեծն է Գողթանի շրջանում: Այս ձորում հնումը նշանաւոր է եղել Ազա և Գիրան (Շիրան) քաղաքները, ուստի և ոչ միայն այս հովիտը, այլ և ամբողջ Գողթան զաւառակը սրանց երկուուի միացեալ անունով կոչուել է Ազա-Շիրան: Այժմ այդ անունը այլ ևս գործածական չէ և այս ձորը աւելի յիշուում է Բիսա և Բելն գլխաւոր գիւղերի անուններով: Այս ձորի մէջով հսուու է Գիրան-Հայը, որ յառաջանուում է Սաղկար-սուի և Այրի-Հայի միախառմամբ և ընդունելով միքանի վտակներ, ինչպէս Բոտաչայ, Տեփ-Հայ և Բելե-Հայ՝ թափւում է Արաքսի մէջ: